

891.996

p-95

2011-05

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՋԱՎՈՐԱՆ



891.99 Մ

Բ - 95

ար



Լույս է տեսնում ՀՍԽՀ Սոցիալաբարչության կից գործող մանկակ. գրականութ. հանձնաժողովի հովանավորությամբ

320 1002 38432


Պետհրատ 1008, Գրառեպլիկար 2215 (բ) Տիրած 4000:

Վիճագրատուն Հայպոլիգրաֆի. Պատ. 3918:

ԱՐՁԱՎՈՐՍ

Ա.

Մի կերի տարի յես ու մեր Ավագը Մասրերում խոզ եյինք պահում: Հիմի մի աշունքվա գիշեր բերել ենք խոզը իր նիստը արել ու դափի դռանը մի կրակ վառել, փոր բոցն ասածու փոտներն երում ե: Մի լուսնյակ գիշեր ե: Յես պիտ յեմ ամում, ես Ավագն ել մի բայաթի յե վեր քաշել, փոր սար ու ձոր զվզվում են:





Մին ել Ավագը թե՛ «Այ տղայ, ես ո՞վ եմ, հրեն մի մարդ եմ գալի վերի կոնիցը»:

Մտիկ տամ տեսնեմ, զրուստ վոր, մի մարդ եմ գալի վերիցը: Ամա յես ել լսել եմ, վոր արջը գողովթյուն գալիս՝ խաբելու համար՝ առաջի յերկու վտոր դռին եմ դնում, յերկու վտանի մարդի նման եմ գալիս, վոնց վոր մարդ ըլի:

Ասի՛ Ավագ, ես ոքմին չի, արջ եմ:

Թե՛ բո՛հ, չե՛ չե՛ պողեր:

Ա՛ տղա, ասի, արջ եմ:

Յես՛ հա, սա՛ չե՛. յես՛ հա, սա՛ չե՛: Իսկ նա յել կամաց-կամաց կողքըհան մոտենում եմ, ու ձեռներիս ել հրացան չկա: Մին ել եմ տեսանք՝ առաջի յերկու վտոր վեր դրավ, դառավ չորսոտանի ու, առ հա կտաս՝ խողի կես տեղը: Խողը ճղճղալով իրար խառնվեց, հավաքվեց արջի վրա:

— Այաբաշ, բռնի հա բռնի, հրես հա հրես:

Ամեն մինս մի ածխակով վեր կալանք, վազեցինք: Մի հաստլիկ մերուն ունեյինք. ականջ դնենք, վոր սրա ճղղոցը ներքի փոսերիցն եմ գալի: Վազ տվինք փոսերի վրա: Ածխակով քաշել ենք. հիմի ես անիրավին վեր ենք հատում, տալիս ենք, ինչ անում ենք չենք անում, մերունը բաց չի թողնում. առաջներս խտտած ձորն եմ ընկնում: Վերջը՝ շատ տեղը նեղացրինք, չե՛, թող արավ, փախավ:

Առավոտը ասի՛ Ավագ, դու խողի կշտին կաց, յես գնամ տանիցը մի հրացան բերեմ:

Թե՛ դե՛, լավ:

Բ.

Ավագը խողի կշտին կացավ, յես գնացի. տանը մի հին հրացան ունեյինք, վեր կալա յեկա: Յեկա, շիտակ գնացի ներքի մոշուտանին, վորտեղ, գիտեմ, արջի տեղն եմ: Ման յեկա. վոր գտա վոշ, մի տեղ մի լավ մոշուտ պատահեց, կանգնեցի, ասի՛ մի քիչ մոշ ուտեմ: Միամիտ մոշ ուտելիս՝ հենց մոշենու տակիցը մինը ֆրթացրեց ու հրացանս բռնեց:

Դու մի ասիլ, գնացել եմ հենց անտեր արջի վրա յես կանգնել:

Վոր հրացանիս լուլիցը բռնեց, յես ել կոթը պինդ բռնեցի: Հիմի նա ոլորում եմ, ուզում եմ կոտրի, յես ել ոլորում եմ, վոր հենց անեմ՝ ծերը վրեն ընկնի, հուպ տամ,

ծուխը փորն անեմ: Բայց անտերը գլխի յե ընկել, թող-
նում չի:

Յես ձգեցի, նա ձգեց. տեսա, վոր բան չի դառնում,
ձեռս գցեցի, ասի՝ հանկարծ խլեմ: Ձեռս դցեցի թե չե,
թաթիկը բերավ ուսովս պատ տվավ: Վոր թաթիկը ուսովս
պատ տվավ, հրացանը բաց թողեց: Ենքան արի՝ հրացանի
ծերը փորին դեմ առավ, չախմախը ձեռս գցեցի. ասի՝ ես
ե, բանը պրծավ: Վերի փոտը քաշեցի՝ չըրթկացրի, տրաքեց
վոչ: Մտիկ տամ, տեսնեմ՝ քարը վեր ե ընկել, կորել: Ես-
տեղ մեջքս կոտրեց: Հրացանը բաց թողի, ասի՝ խտտիցն
ազատվեմ, եղավ վոչ: Բռնեցինք իրար:

Գ.

Դես քաշեցինք, դեն քաշեցինք: Տեսնեմ՝ անտերն ես ե,
ինձ ուտում ե: Ձեն տվի՝ «Ալաբաշ հեյ... Ալաբաշ հեյ...»:



Մին ել տեսա՝ շունը կլանչելով գալիս ե: Յեկավ, հասավ:
«Ալաբաշ, ոգնի, ասի, ինձ կերավ...»: Հայ քեզ մատաղ,
շուն, վոր հասավ, մեջքին տվավ ելի, վոնց վոր մի գնդակ
ըլի: Ամա ինչ. ես շունը թե նրա մեջքին տված, թե ես
լեռ քարափին:

Վոնց վոր յերկու փահլևան պինդ իրար բռնեն, բռնել
ենք ու աչք աչքի յենք գցել: Մին ել ես տեսա՝ կում արավ
ու մարդի պես յերեսիս մի մեծ թքեց—թն: Վոր թուրն
աչքերս բռնեց, գլուխս դռչիս վրա կռացրի, յետնուց ել
թանթիկով մի թունդ ապտակ հասցրեց, ու ինձ կորցրի:




Տեսա՛ ել ազատվելու դուռը չկա, ասի՛ յես առաջուց յե-
րեսիս վրա վեր ընկնեմ, վոր յերեսս փշացնի վոչ: Բերանս-
վեր տակին վեր ընկա: Վոր տակին վեր ընկա, շունն ավե-
լի կատաղեց: Արջն ընկել է ինձ վրա, շունը յետևից իրան
ուտում է, վորտեղից բռնում է, ոգուտ չի անում: Դու մի
ասի՛ վարպետ շուն է, գիտի արջը վորտեղից կխեղճանա:
Մեջքին վեր ելավ, ականջներիցը բռնեց: Վոր ականջներիցը
բռնեց, արջը ինձ թողեց: Անտերը գազազեց, շանը թափ
տվեց մեջքից, վեր գցեց ու բռնեց, հուպ տվավ թե չան-
չեց. ել գիտեմ վոչ՝ ինչ արավ, վոր բաց թողեց, շունը
կլանչելով ձորն ընկավ, փախավ, կորավ:

Դ.

Շունն. ել գնաց. մնացինք յես ու ինքը: Հիմի տակին
յերեսս բռնած միտք եմ անում: Իմացել եմ, վոր արջը ականջ է
գնում տեսնի շունչ կա, թե չէ: Թե իմանում է, վոր շունչ է
քաշում, տակի ոքմինը ջարդում է մինչև շունչը կտրի, թե
հո չէ, քոթկաթաղ է անում, թողնում, գնում, վոր հոտի,
հետո գա հանի, ուտի: Ես միտք անելիս մին ել են տեսա՛
գլուխը բերավ գլխիս վրա դրավ, շունչը իրեն քաշեց. ա-
կանջ է դրել: Յես ել շունչս փորս գցեցի, վոնց վոր թե
մեռած եմ: Գլուխը վեր քաշեց, մի քիչ կացավ, մին ել ա-
կանջ դրավ: Ել յետ շունչս պահեցի: Սա վոր տեսավ՝ յես
ես է մեռած եմ, ինձ թող արավ, մըթմըթալով գնաց: Աչքս
ծերպ արի, ասի՛ մտիկ անեմ, տեսնեմ ուր է գնում: Ասում
եմ՝ հենց լինի մի քիչ տեղ հեռանա, վեր կենամ փախչեմ:

Գնաց՝ մոտիկ ցախ ու մախ կար, փետ կար, հավաքեց
բերավ, վրես ածավ: Մեջքիս վրա դրավ, շինքիս վրա դրավ,
ել յետ գնաց: Գնաց՝ մի թեթև ցրցչորի կար, են ել բերավ,
վոտներիս վրա դրավ, մին ել յետ գնաց:



Տեսնեմ՝ մի ահագին քոթուկ կա, չարչարվում է պոկի,
վոր բերի են ել վրես գցի: Միտք արի վոր՝ թե ես քոթու-
կը բերի վրես գցի, տակին շունչս կկտրի: Ասի՛ քանի
ուշքը քոթուկումն է, վեր կենամ կորչեմ: Փորսող տալով
փետերի տակիցը դուրս յեկա, փախա մտա՝ մոտիկ մամ-
խուտը, տապ արի:

Հիմի տապ արած տեղիցը մտիկ եմ անում: Չարչար-
վեց, քոթուկը պոկեց ու վոնց վոր մարդը խտտի, խտտեց,
բերավ թե վրես գցի: Յեկավ տեսավ՝ փետերի տակին մարդ
չկա: Քոթուկը խտտին զարմացած կանգնեց, փետերի տա-
կին մոտիկ արավ, չորս կուռը մոտիկ արավ, հանկարծ քո-
թուկը վեր գցեց ու՝ թո՛ւ հա թո՛ւ, թո՛ւ հա թո՛ւ, մարդի
նման թքոտում է. ասի՛ յերևի ափսոսում է, ելի:

Թո՛ւ հա թո՛ւ անելով, ճռճռացնելով ընկավ ներքի ձորը:
Յես ել վեր կացա, դուրս պրծա դեպի Ավագը: Գալիս եմ,
վոնց եմ գալիս, վոնց վոր հետ ածած լինեմ: Յետ եմ մոտիկ
անում, ասում եմ տեսնեմ, հո արջը գալիս չի: Հասա մեր
խողի նիստը: Ես Ավագը թե՛ անյ տղա, եղ ի՞նչ խաբար է,
եղ ի՞նչ ես յեղել: Ասի՛ ել խաբարը վո՞րն է, քո տունը
քանդվի, եսենց բան յեկավ գլխիս: Թե՛ բա հրացանդ ո՛ւր է:

Նոր տեսնեմ, վոր հրացանս մտիցս ընկել է, թողել եմ տեղը:



Յեկանք մի քանի հողի հավաքվեցինք, գնացինք հրացանս բերինք: Հրացանիս բարը շինեցի, պնդացրի, ասի՝ Ավագ, ելի պետք է գնամ. թե՛ այ տղա, ձեռք վեր կալ, կրճնի, կզզի: Ասի՝ հիմա սովորեցի, ենպես չեմ անի, վոր բռնի:

Թե՛ դու գիտես:

Հրացանս վեր կալա, քարը պնդացրի ու գնացի: Տանձի յել կաթոցի ժամանակն է: Գնացի մինչև ճաշ ման յեկա, վտանահան յեղա, գտա վոչ: Միտք արի՝ ախպեր, սա ուր կլինի քաշված, ախր սա պետք է վոր ես խոզի կողմերից հեռանա վոչ: Վեր կացա, ասի՝ ներքեմ մոշուտների վրա:

Մի քիչ գնացի, մին ել տեսնեմ, ըհը, արջի հետքը առաջիս: Հետքն ընկա, գնացի. գնամ տեսնեմ՝ հրես մի բարդի կրծել է, կրծել ու թողել: Գլխի ընկա, վոր սրանում մեղր կա: Վերև մտիկ տամ, ճանճը արկանոցից բանում է: Ասի՝ հիմի թե իրեն գտնեմ ել վոչ, ես հո վորս ե ու վորս: Մի քիչ ել գնացի, տեսնեմ, առաջիս մի մորմոնջաբուն է քանդել, բայց հողը դեռ թաց է: Տեսա վոր մոտեցել եմ:




Եստեղ մի անտեր ան ընկավ սիրտս: Հրացանի քարին մտիկ տվի ու առաջ գնացի: Հենց վոտս փոխեցի, մի թմբիթմփոց յեկավ: Կանգնեցի... Բացատի (թալի) գլխին մի լավ մեղրատանձի կա. տեսնեմ՝ հրես տակին տանձ է ուտում: Ես կռանը մի տանձ է կաթում, դեռն է վազում, մրթմրթալով ծամում է ու ականջ դնում, են կռանը մի տանձ է կաթում, դեռն է վազում: Մին ել վոր կանգնեց տանձի կաթոցին ականջ դնելու, ծառի տակը մտա, հրացանն յերեսս կալա: Տեսնեմ հրացանի ծերը տմբտմբում է: Չէ, սիրտս պընդացրի, մին ել նշան դրի, հուպ տվի... Հրացանը վոր տրաքեց, սա մի գողաց, պտիտ յեկավ, ու առ հա կտաս, ընկավ ներքի ձորը: Հրացանս մին ել լցրի, մոտիկ թմբի գլուխը բարձրացա, տեսնեմ՝ սա ջրին է վազում. ասի՝ բաս սրա բանը խարաք է, վիրավորը վոր ջրին գնաց, ջուր խմեց — պրծավ, ել ապրիլ չի:



Մին ասի՝ յետևիցը գնամ, մին ել ասի՝ անեծք չար սատանին, վիրավոր արջը գեշ է, կբռնի, կփչացնի: Են է, ինչ նա դենը գնաց, յես ել յետ յեկա, ել գիտեմ վոչ ինչ յեղավ:

Միայն են որերում ձորի վրա շատ ուրուրապտիտ յեկավ...







ՀՀ Ազգային գրադարան



NL0400186

8818

